



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

„16 „ հունվարի 2014թ.

N 07 Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով
կարգադրում եմ՝

1. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արծվանիստ գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- Շառոյան Վ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ
- Օհանյան Ս. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
- Նյութական պատասխանատու անձինք
 - Մանուկյան Ա. - հանձնող
 - Սահակյան Թ. - ընդունող
 - Հովհաննիսյան Ն. - դպրոցի հաշվապահ
 - Մկրտչյան Մ. - տնտեսական գծով փոխտնօրեն

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Վ.Շառոյան/ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման վերահսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝  Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ